

Քննախօսութեան բարոյագիտութեան նիւթերը

Քննախօսութեան բարոյագիտութեան գործնական բոլոր նիւթերը կապ ունին *Կիրառական բարոյագիտութեան* հետ եւ այսպիսով, ան կը բովանդակէ մեր կեանքին հետ առնչութիւն ունեցող բոլոր գործնական նիւթերը, որոնք կու գան զանազան ոլորտներէ:

Գործնական քննախօսութեան գլխաւոր նիւթերը, ա՛յն այժմեական հարցերն են, որոնք կու գան.-

- *Ընկերաքաղաքական բարոյագիտութենէն* (Social-Political Ethics), ինչպէս՝ ընկերային արդարութեան եւ միջ-մշակութային (Inter-Cultural) զանազան հարցերը,
- *Տնտեսութեան բարոյագիտութենէն* (Business Ethics), ինչպէս՝ գործատէրերու ընկերային պատասխանատուութեան (Social Responsibility) հարցը,
- *Բնապահութեան բարոյագիտութենէն* (Environmental Ethics), ինչպէս՝ երկիր մոլորակի, մարդկային ու կենդանական սեռի եւ բնութեան պահպանման հարցերը. եւ
- *Բժշկական բարոյագիտութենէն* (Medical Ethics), ինչպէս՝ վիժումի (Abortion), հեշտամահութեան (Euthanasia), ծինաբանութեան (Genetics), մարմնի մասերու փոխպատուաստման (Transplantation), գերհոգատարական բժշկութեան (Intensive Medicine), սեռային (Sexual) եւ բազմաթիւ այլ հարցերը:

Քննախօսութեան բարոյագիտութիւնը չի կրնար, վերոյիշեալ նիւթերու առնչութեամբ, որեւէ, բովանդակութեան ու բարոյագիտական իմաստներով, օժանդակութիւն ներկայացնել: Ան կարող է միայն որոշել՝ քննախօսութեան պայմանները, թէ ի՞նչ ձեւով հնարաւոր է լաւագոյն պայմաններ ստեղծել՝ յաջող ու արդիւնաւետ քննախօսութեան մը համար:

Գործնական քննախօսութեան արդիւնքները, սակայն, երբեք վերջնական չեն կրնար ըլլալ, որովհետեւ անոնք կրնան՝ նախ սխալական ըլլալ, ապա անոնք անպայման ենթակայ են ժամանակի ընթացքին փոփոխութիւններու: Այս պատճառով ալ, որեւէ քննախօսութիւն՝ պէտք է վերաքննութեան կարելիութիւնը ընձեռէ:



Քննադատութիւն

Ինչպէս բոլոր, նախապէս քննարկուած բարոյագիտական տեսութիւնները, նաեւ Ապելի եւ Հաբերմասի *Քննախօսութեան բարոյագիտութիւնը* կը բախի որոշ դժուարութիւններու: